

ՀՏԴ 911.6

ԴԱՍՍՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

**ՇԻՐԱԿԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ
ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
(XXդ. վերջ, XXIդ. սկիզբ)
Բոյաջյան Ա. Գ., Ավետիսյան Գ. Ռ.**

Նորանկախ Հայաստանի տնտեսությունը, լինելով լուծարված ԽՍՀՄ տնտեսական համակարգի մի մասը, XXդ. վերջին արմատական կառուցվածքային փոփոխության ենթարկվեց: Մեր հանրապետությունը պատրաստ չէր համաշխարհային տնտեսության զարգացման մարտահրավերներին: Խորհրդային տնտեսական համակարգից անցումը կապիտալիստականի՝ համաշխարհային շուկայի առկայության պայմաններում, հանրապետության, այդ թվում Շիրակի մարզի աշխատանքի մասնագիտական բաժանման մեջ հանգեցրեց քանակական և որակական տեղաշարժերի: Արդյունքում՝ մարզը մասնագիտացավ հանքարդյունաբերության և գյուղատնտեսական մթերքների արտադրության մեջ, ինչպես նաև հանրապետության այլ շրջաններից սկսեց ներմուծել այնպիսի արդյունաբերական պատրաստի ապրանքներ, որոնք խորհրդային տարիներին տնտեսական շրջանում մեծ քանակությամբ արտադրվել են: Տնտեսության, հատկապես նյութական արտադրության ոլորտներում թույլ տրվեցին մի շարք ռազմավարական սխալներ. պետությունն ամբողջապես զիջեց իր դիրքերը նյութական և ոչ նյութական տնտեսվարման համակարգում, հատկապես արդյունաբերության ոլորտում:

Բանալի բառեր. սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ, տնտեսական շրջան, արդյունաբերություն, զբաղվածություն, արտագաղթ, գործազրկություն, արդյունաբերական ներուժ, մեքենա-շինություն, թեթև սննդի արդյունաբերություն:

ԽՍՀՄ-ի փլուզումը ցույց տվեց, թե սոցիալ-տնտեսական և քաղաքական խորը ինտեգրացիան ինչպիսի բացասական հետևանքներ

կարող է ունենալ որևէ երկրի տնտեսության, մասնավորապես արդյունաբերության ու բնակչության կենսամակարդակի վրա: Այդ համատեքստում սույն հոդվածում ներկայացվելու են Շիրակի մարզի արդյունաբերության զարգացման գործընթացները հետխորհրդային տարիներին:

Շիրակի ժամանակակից տնտեսության հիմքը դրվել է 1990-ական թվականներին: Տնտեսության կառուցվածքում, հատկապես արդյունաբերությունում տեղի ունեցան արմատական փոփոխություններ: Դրանում իր գործուն ազդեցությունն ունեցան 1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի ավերիչ երկրաշարժը և 1990-ականների սոցիալ-տնտեսական համակարգի փոփոխությունը: Խորհրդային պլանային հանրային տնտեսվարումից անցում կատարվեց կապիտալիստական շուկայականի: Այդ առումով մարզի արդյունաբերական գրեթե բոլոր ձեռնարկությունները սեփականաշնորհումից հետո դադարեցին գործելուց: Սեփականաշնորհված արդյունաբերական ձեռնարկությունները կորցրին իրենց շուկաները Խորհրդային Միության տարածքում: Շիրակում պարապուրդի մատնվեցին, ապամոնտաժվեցին և լուծարվեցին բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ, որից շահեցին ձեռնարկությունների սեփականատերերը՝ ձեռք բերելով գործարանները շուկայականից ցածր գներով: Ձեռնարկություններում աշխատող բանվորները դարձան գործազուրկներ, ինչը բերեց նրանց մեծ մասի աղքատացմանը և արտագաղթին:

Հաշվի առնելով XX դ. վերջին և XXI դ. սկզբին Շիրակի տնտեսության մեջ տեղի ունեցած սոցիալ-տնտեսական փոփոխությունները՝ պայմանականորեն այն կարելի է բաժանել հետևյալ ժամանակափուլերի.

1980-1988թ. -նախաերկրաշարժյան փուլ,

1989-1992թթ.- հետերկրաշարժյան փուլ,

1993-2000թթ.-տնտեսության համատարած սեփականաշնորհման և բնակչության աղքատացման և զանգվածային արտագաղթի առաջին փուլ,

2001-2007թթ.-սոցիալ-տնտեսական վերելքի և կայունացման փուլ,

2008-2012թթ.-սոցիալ-տնտեսական ճգնաժամի և բնակչության զանգվածային արտագաղթի երկրորդ փուլ՝ պայմանավորված համաշխարհային, մասնավորապես ՌԴ սոցիալ-տնտեսական

ճգնաժամով: Հիշատակենք, որ ՀՀ սոցիալ-տնտեսական ոլորտները խիստ ինտեգրված են ՌԴ սոցիալ տնտեսական համակարգին:

2013-2018թթ.սոցիալ-տնտեսական իրավիճակի կայունացման և արտագաղթողների թվի նվազման փուլ:

Շիրակի արդյունաբերության ներուժի շեշտակի անկում գրանցվել է 1989-2000թթ.՝ պայմանավորված ավերիչ երկրաշարժով, արդյունաբերական ձեռնարկությունների ինտենսիվ սեփակա-նաշնորհումով, էներգետիկ ճգնաժամով, արցախյան պատերազմով և այլ գործոններով: Սեփականաշնորհվող արդյունաբերական ձեռնարկությունների վրա պետական վերահսկողության բարձիթողի վիճակը հանգեցրեց նրան, որ նոր սեփականատերերի մեծ մասի կողմից արտադրական միջոցները գրեթե փոշիացան: Իշխանությունները նոր սեփականատերերի առջև չդրեցին պարտավորվածություն՝ արդյունաբերական ձեռնարկությունները շահագործելու:

Հայտնի է, որ ցանկացած երկրում նյութական արտադրությունն ուղղակիորեն ազդում է ազգային տնտեսության զարգացման վրա: Այդ առումով, տնտեսության զարգացումն ապահովող գլխավոր նախապայմանն է արդյունաբերությունը և նյութական արտադրության զարգացումն ապահովող ծառայությունները: Ցավոք, ներկայացվող ժամանակահատվածում Շիրակում տնտեսության տեսակարար կշռում ամենաբարձր աճ գրանցվել է մանրածախ առևտրի ոլորտում՝ 25,7 անգամ, իսկ արդյունաբերությունում՝ շեշտակի անկում: Դրանով պայմանավորված՝ կարելի է արձանագրել, որ տնտեսական շրջանում արտադրող հասարակությունից անցում է կատարվել սպառող հասարակության: Այդ անցումը բացատրվում է առաջին հերթին հանրապետության տարբեր կառավարությունների որդեգրած սոցիալ-տնտեսական քաղաքականությամբ:

Այժմ ներկայացնենք XX դ. վերջին և XXI դ. սկզբին Շիրակի արդյունաբերության զարգացման գործընթացները: Տնտեսական շրջանի արդյունաբերության զարգացման հիմքերը դրվել են 1920-ական թվականներին, երբ պետության կողմից վարվող սոցիալ-տնտեսական քաղաքականությունը նպաստել է տեղական արդյունաբերության զարգացմանը, իսկ 1960-ական թվականներից կառուցվեցին և շահագործման հանձնվեցին խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, որոնցից մի քանիսն ունեցել են ոչ միայն հանրապետական, այլև տարածաշրջանային, իսկ տեքստիլ կոմբինատը՝ միութենական նշանակություն: Շիրակի մարզը, մասնավորապես

Գյումրի քաղաքը, 1980-ական թվականներին դարձավ ոչ միայն մեր հանրապետության, այլև Հարավային Կովկասի արդյունաբերության զարգացման խոշոր հանգույցներից մեկը: Տնտեսական շրջանի արդյունաբերության զարգացման առաջատար ճյուղերն էին թեթև արդյունաբերությունը, մեքենաշինությունը, սննդի արդյունաբերությունը և կահույքագործությունը:

Տնտեսական շրջանի, հատկապես Գյումրի քաղաքի արդյունաբերությանը մեծ նյութական վնաս հասցրեց 1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի ավերիչ երկրաշարժը: Գյումրի քաղաքի 33 արդյունաբերական ձեռնարկություններից ամբողջությամբ ոչնչացան 13-ը, իսկ մնացածը՝ մասնակիորեն [3,թ.1]: Գյումրու արդյունաբերության նյութական վնասն ընթացիկ գներով գնահատվել է 250 մլն. ռուբլի, ինչը կազմել է քաղաքի արդյունաբերության հիմնական արտադրական ֆոնդերի 70%-ը [3,թ.1]: Արժե հիշատակել, որ աղետի զոտում ամբողջությամբ կամ մասնակիորեն ավերվեց 230 արդյունաբերական օբյեկտ, որը կազմել է մեր հանրապետության արդյունաբերական կարողությունների 25%-ը [9]:

1990թ. Գյումրու արդյունաբերական արտադրանքի ծավալն աճելով հասցվեց մինչ 1988թվականի 40%-ին, սակայն 1991թ-ից սկսած՝ սոցիալ-տնտեսական վերափոխումների, տարածաշրջանի աշխարհաքաղաքական լարվածության, ԽՍՀՄ-ի լուծարման պատճառով նորից նվազեց [3,թ.3]: Արդյունաբերության նյութական կորուստների մասին պատկերացում կազմելու համար բերենք մի քանի թվային ցուցանիշներ. 1985թ. Շիրակի արդյունաբերական ձեռնարկությունների կողմից թողարկված արտադրանքի ընդհանուր ծավալը կազմել է հանրապետությունում թողարկվածի 13,4%-ը, 1997թ.՝ 3,2%-ը, 2003թ.՝ 2,7% -ը [1, էջ 160] և 2017թ.՝ 2,4%-ը [10]: Եթե 1980-ական թվականներին Շիրակի տնտեսական շրջանն արդյունաբերական արտադրության ծավալով հանրապետությունում զիջել է միայն Երևանին, ապա այժմ զիջում է ոչ միայն Երևանին, այլև Արարատի, Սյունիքի, Արմավիրի և Կոտայքի մարզերի արդյունաբերական արտադրության ծավալներին:

1980-ական թվականներին Շիրակում գործել են թվով 72 արդյունաբերական ձեռնարկություններ, որոնք տարեկան թողարկել են 1,3 մլրդ ռուբլու արտադրանք [11]: Արդյունաբերության ոլորտում առանձնակի տեղ են զբաղեցրել խոշոր և միջին մեծության ձեռնարկությունները: Այժմ տնտեսական շրջանի արդյունաբերական կազմակերպությունների ընդհանուր քանակում գերակշռում են

գերփոքր և փոքր ձեռնարկությունները, որոնց տեսակարար կշիռը կազմում է 76% [12]: Տնտեսական շրջանում 2012թ. թողարկված արդյունաբերական արտադրանքի 60%-ը բաժին է ընկել Գյումրի քաղաքին [13], այն դեպքում, երբ 1980-ական թվականներին նույն ցուցանիշը 75% էր [2, էջ 160]: 1983թ. Գյումրիում գործել է 53 արդյունաբերական ձեռնարկություն, որտեղ աշխատել են 48,9 հազար մարդ [2, էջ 161]: Քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններից 12-ը խոշոր էին (501-1000 աշխատող), իսկ 13-ը՝ խոշորագույն (1001 և ավելի աշխատող): Խոշորագույն ձեռնարկություններին բաժին է ընկել մարզի արդյունաբերության մեջ զբաղվածների ամբողջ թվի 73,2%-ը [2]:

Աղյուսակ 1-ից երևում է, որ 2002թ-ից սկսած՝ արդյունաբերության տեսակարար կշռի աստիճանական աճ է գրանցվել: Այդ աճը բացատրվում է նոր արդյունաբերական՝ հատկապես թեթև, սննդի ձեռնարկությունների շահագործումով:

Աղյուսակ 1.

Շիրակի տնտեսության հիմնական ճյուղերի տեսակարար կշիռը %-ով [16]

Տնտեսության ճյուղեր	1997թ.	2002թ.	2007թ.	2012թ.	2017թ.
Արդյունաբերություն	15,1	13,1	14,0	18,6	18,7
Գյուղատնտեսություն	54,1	45,7	55,3	41,2	44,9
Շինարարություն	5,6	14,2	4,9	17,3	1,6
Մանրածախ առևտուր	18,3	18,5	16,1	14,6	23,3
Ծառայություններ	6,9	8,5	23,7	8,3	11,5
Ընդամենը	100	100	100	100	100

Վերջին 30 տարիներին արդյունաբերական ձեռնարկություններում ոչ միայն աշխատողների թվի շեշտակի անկում է գրանցվել, այլև վերացել են խոշոր և խոշորագույն արդյունաբերական ձեռնարկությունները: Տնտեսական շրջանում այժմ գործում է միակ միջին մեծության (301-500 աշխատող) արդյունաբերական ձեռնարկությունը՝ «Լենտեքսը»: Հիշատակենք, որ 1987-2017թթ. մարզի արդյունաբերական ձեռնարկություններում զբաղվածների թիվը պակասել է 14,8 անգամ:

Աղյուսակ 2-ից երևում է, որ արդյունաբերությունում զբաղվածների թվի էական անկում գրանցվել է 1987-1995թթ-ին՝ մոտ 2,8 անգամ և 1995-2001թթ.՝ 5,2 անգամ:

Աղյուսակ 2.

Շիրակի արդյունաբերական ներուժը բնութագրող ցուցանիշները [15]

Տարե թիվ	Շիրակի արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը ՀՀ-ում	Արդյունաբերության մեջ զբաղվածների թիվը/հազ.մարդ/	Արդյունաբերական ձեռնարկությունների թիվը	Ամսական միջին աշխատավարձը ընթացիկ գներով/դրամ/
1987թ.	13,4	50,2	78	250 ռուբլի
1995թ.	2,9	18,1	65	3938
2001թ.	3,1	3,5	110	14842
2005թ.	2,1	3,1	95	53514
2008թ.	2,4	2,7	86	77103
2013թ.	2,7	3,2	86	126108
2017թ.	2,5	3,4	87	156215

Եթե առաջին ժամանակափուլում աշխատողների թվի նվազումը պայմանավորված էր հիմնականում ավերիչ երկրաշարժի հետևանքներով, ապա երկրորդի դեպքում բացառապես իշխանությունների կողմից իրականացվող սոցիալ-տնտեսական քաղաքականությամբ:

Աղյուսակ 2-ի թվային ցուցանիշների վերլուծությունից պարզ է դառնում, որ 1987-2017թթ. ՀՀ-ում Շիրակի արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը նվազել է 5,4, արդյունաբերության ոլորտում զբաղվածների թիվը՝ 14,8 անգամ: Արդյունաբերական ձեռնարկությունների թիվն ավելացել է, սակայն վերացել են խոշոր արդյունաբերական ձեռնարկությունները, իսկ 1995-2017թթ. ընթացիկ գներով՝ աշխատավարձն ավելացել է մոտ 40 անգամ:

2016թ. Շիրակի մարզում արտադրանք է թողարկվել 101 տնտեսավարող սուբյեկտներում, որից 78-ը՝ մշակող արդյունաբերական ձեռնարկություններում [4,թ.13]: Ունենալով բազմապիսի արդյունաբերական նշանակության հանքային ռեսուրսների պաշարներ՝ մասնավորապես շինարարական, տնտեսական շրջանի հանքարդյունաբերությունը թույլ է զարգացած: Հանքարդյունաբերության արտադրական ծավալը չի գերազանցում արդյունաբերության համախառն արդյունքի մեկ տոկոսը: Մարզի հանքարդյունաբերական ձեռնարկությունների թիվը 53 է, որից գործում է 38-ը, իսկ դրանց կեսը գտնվում է Արթիկի տարածաշրջանում [18]: Հանքարդյունաբերական ձեռնարկությունները հիմնականում

արդյունահանում են շինարարական օգտակար հանածոներ՝ շինարարական տուֆ, ավազ, բազալտ (Փանիկ գյուղի մոտ), անդեզիտա-դացիտ (Ջաջուռ), դոլերիտային բազալտ (Կապս): «Կարին Գեո» ՍՊԸ-ն մինչև 2015թ լուծարումը Ջաջուռ գյուղի մոտ գորշ ածուխ է արդյունահանել, որը հիմնականում սպառվել է Շիրակում:

Շիրակի տարածաշրջանում մշակող արդյունաբերությանը տարբեր տարիներին բաժին է ընկել արդյունաբերության ընդհանուր արտադրական ծավալի 74-83%-ը, իսկ հանքարդյունաբերությանը՝ մինչև 0,1-2%-ը (տես աղյուսակ 3): Մշակող արդյունաբերության մեջ ծանրակշիռ տեղ են զբաղեցնում սննդի և թեթև արդյունաբերությունը (խորհրդային տարիներին թեթև արդյունաբերությունն էր և մեքենաշինությունը): Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում տեսանելի փոփոխություններ են գրանցվել մշակող արդյունաբերությունում և էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրությունում: Այդ փոփոխությունը բացատրվում է էլեկտրաէներգիայի, գազի և ջրի արտադրության ծավալի նվազումով և մշակող արդյունաբերության ձեռնարկություններում արտադրված ապրանքների գների թանկացումով:

Աղյուսակ 3.

Շիրակի մարզի արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների (ամբողջ արդյունաբերությունը՝ 100 %) [16]

Տարե թիվ	Հանքագործական արդյունաբերություն	Մշակող արդյունաբերություն	Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում
2000թ.	0,6	74,0	25,4
2005թ.	2,0	73,3	24,7
2008թ.	2,7	73,7	25,3
2011թ.	0,3	87,6	11,2
2014թ.	0,1	87,8	10,2
2017թ.	0,3	83,4	13,9

Խորհրդային տարիներին Գյումրին համարվել է տեքստիլագործների քաղաք: 1980-ական թվականներին թեթև արդյունաբերության ոլորտի արտադրանքը կազմել է Հայկական ԽՍՀ տնտեսության համախառն արտադրանքի շուրջ 1/3-ը, որը բաժին է ընկել Գյումրի քաղաքին: Այդ տարիներին հանրապետության թեթև արդյունաբերության ոլորտի աշխատողների թիվը կազմել է 115 հազար

մարդ, որից 23%-ը բաժին է ընկել Գյումրիին [17]: Այժմ ՀՀ-ում գույքագույլապ արտադրող ամենախոշոր ընկերությունը «Լենտեքս» ՍՊԸ-ն է, որը գտնվում է Գյումրի քաղաքում: Այդ ձեռնարկությունում արտադրում են գուլպաներ, կիսագուլպաներ, իսկ 2013թ-ից՝ տրիկոտաժելեն և ներքնաշորեր: Ընկերության արտադրանքը սպառվում է հիմնականում ներքին շուկայում: 2013թ. ամբողջ արտադրության 3%-ն արտահանվել է ԱՄԷ, Ֆրանսիա և Կանադա [5, թ.12]: 2016թ. «Լենտեքսում» աշխատողների թիվը կազմել է 350 մարդ, իսկ համախառն արտադրանքը՝ 100 մլն.դրամ [11]: Շիրակի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատողների թվի շուրջ 10%-ը բաժին է ընկնում «Լենտեքսին», իսկ «Արշալույս» թեթև արդյունաբերական ընկերությունում աշխատում է 50 մարդ [11]: Ներքնաշորեր արտադրող «Գևորգ և Վահան» ՍՊԸ-ն արտադրանքի 90%-ից ավելին արտահանում է Կանադա [5, թ.4]: Մարալիկ քաղաքում գործող «Նայթեքս» ընկերությունը հայկական բանակի համար արտադրում է սրբիչներ, ներքնաշորեր և նմանատիպ այլ արտադրատեսակներ [5, թ.7]:

Խորհրդային տարիներին մարզի արդյունաբերության ոլորտում առանձնակի տեղ է զբաղեցրել մեքենաշինությունը: Մարզի մեքենաշինության զարգացման հենքը եղել են տեղական մեքենաշինական արտադրական ձեռնարկությունները: Հետխորհրդային տարիներին մեքենաշինությունում տեսանելի դրական փոփոխություններ չկան: 1980-ական թվականներին մարզի մեքենաշինության ներուժը կենտրոնացված էր Գյումրի քաղաքում: Այդ տարիներին քաղաքի արդյունաբերական արտադրանքի 23-28%-ը բաժին է ընկել մեքենաշինությանը, զիջել է միայն թեթև արդյունաբերությանը [2, էջ 162]: 1983թ. քաղաքի մեքենաշինական ձեռնարկություններում աշխատողների թիվը գերազանցել է 12.000-ը, 2017թ.՝ 200-ը [6, թ.6]: Հիշատակենք, որ Շիրակի թեթև, մեքենաշինական և շինանյութերի արդյունաբերական ձեռնարկությունները հավասարակշռություն են ապահովել բնակչության զբաղվածության սեռային հարաբերակցությունում: Կանայք հիմնականում աշխատել են թեթև, իսկ տղամարդիկ՝ մեքենաշինական և շինանյութերի արդյունաբերական ձեռնարկություններում: Ներկայումս մասամբ գործող մեքենաշինական ձեռնարկություններն են «Անալիտիկ» սարքերի գործարանը, «Քարմշակ մեքենա» ԲԲԸ, «Հայր և որդի Գյոդակյաններ» ավտոմեքանոցային գործարանը, «Մագնոն» ՍՊԸ:

XX դ. վերջին և XXI դ. սկզբին մարզում աստիճանաբար զարգանում է ագրոպարենային համալիրը, որի կարևոր բաղադրիչներն են սննդի և գյուղատնտեսական հումքի վերամշակման արդյունաբերությունը: ՀՀ անկախացման առաջին տարիներին ծրագրեր էին կազմվել՝ ստեղծելու ագրոարդյունաբերական նոր ձեռնարկություններ: 1992թ. Բուլղարիայից 100 հազար դոլար արժողությամբ ստացված սարքավորումները տեղադրելուց հետո Գյումրի քաղաքում նախատեսվեց արտադրել «Պեպսի-Կոլա» զովացուցիչ ըմպելիքների արտադրություն, իսկ մսի պահածոների կոմբինատի տարածքում կառուցել չոր անասնակերի արտադրամաս, որի սարքավորումները մատակարարելու էր Չեխոսլովակիայի «Տեխնոպոլ» ֆիրման: Սակայն կոմբինատի հասցեով մատակատարվեց մեքենասարքավորումների և շինարարական հանգույցների մի մասը և դրանով սահմանափակվեց, որովհետև ԽՍՀՄ արտաքին էկոնոմիկայի բանկը հրաժարվեց կատարել մնացած գումարի փոխանցումը՝ պատճառաբանելով, որ սոցիալիստական երկրների հետ արժույթի փոխանակությունն արգելված է [3, թ.10]:

Սննդի արդյունաբերությունը Շիրակի տնտեսական շրջանի արդյունաբերության առաջատար ճյուղերից մեկն է: Շրջանում սննդամթերքի արտադրությամբ և գյուղատնտեսական հումքի վերամշակմամբ զբաղվում են արտոնագիր ունեցող հարյուրից ավելի տնտեսավարող սուբյեկտներ և անհատ ձեռներեցներ: Այսօր գործում են մոտ 20 ձեռնարկություններ, որոնցից համեմատաբար խոշորները գտնվում են Գյումրիում, Մուսայեյան, Ամասիա, Բանդիվան և Ազատան գյուղերում: Ամենախոշոր ձեռնարկությունը «Ալեքս-Գրիգ» շաքարավազի արտադրական ընկերությունն է, որը տարվա ընթացքում գործում է 3-4 ամիս: Գործարանը հումքը ներմուծում է Բրազիլիայից [7, թ.5]: Ներկայումս տնտեսական շրջանում գործում են ութից ավելի պանրագործական ընկերություններ, որոնցից «Իգիթ» ՍՊԸ-ն և «Բանդիվան կաթը» արտադրում են նաև թթվասեր, կաթնաշոռ, կաթ, պաղպաղակ:

Գյումրիում է գտնվում հանրապետության խոշորագույն գարեջրի-ածիկի «Գյումրի-գարեջուր» գործարանը: 2012թ. գործարանում արտադրված համախառն արտադրանքը կազմել է 1,6 մլրդ. դրամ [11]: «Գյումրի գարեջուր» ՍՊԸ-ն արտադրված գարեջրի 1-3%-ն արտահանում է հիմնականում ՌԴ: Գարեջրի հումքը ներմուծում է Չեխիայից, իսկ գայլուկինը՝ Գերմանիայից [7, թ. 2]: «Արմամաս» ՍՊԸ-ն

ՌԴ-ից, Ֆրանսիայից, Հոլանդիայից բերված գարուց ստանում է ածիկ, որը օգտագործում է «Երևան գարեջուր» գործարանը [7, թ. 3]:

Շիրակում արդյունաբերության զարգացման մյուս ճյուղերից կարելի է առանձնացնել կահույքագործությունը, հրուշակեղենի արտադրությունը, որոնք արդյունաբերության ոլորտում էական նշանակություն չունեն:

XXI դ. սկզբներին փորձ է արվել կազմել Շիրակի մարզի արդյունաբերության զարգացման ծրագրեր: Այսպես, մարզի սոցիալ-տնտեսական զարգացման 2010-2013թթ. ՀՀ կառավարության որոշումով նախատեսվել է ներդրում կատարել՝ մինչև 20ՄՎտ գումարային՝ հզորությամբ «Քարախաչ 1» հողմաէլեկտրակայան կառուցելու համար՝ հետագայում հասցնելով այն մինչև 90 ՄՎտ [19]: Հիշատակենք, որ այս ծրագիրը մինչ օրս չի իրականացվել: Այժմ Շիրակում գործում է 8 ջրէկ՝ 5600 կվտ հզորությամբ [8,թ.3] և 14,63 մլն կվտ.Ժ տարեկան գումարային արտադրանքով փոքր ջրէկ [19]: Արտադրված էլեկտրաէներգիան բավարարում է մարզում սպառվող էլեկտրաէներգիայի միայն 18,4%-ը [8,թ.5]: Եթե ապագայում Քարախաչի 90 ՄՎտ հզորությամբ հողմաէլեկտրակայանը շահագործման հանձնվի, ապա այն կբավարարի Շիրակի մարզի էլեկտրաէներգիայի սպառման պահանջարկի շուրջ 90%-ը: Քարախաչի հողմաէլեկտրակայանի կառուցումը հզոր խթան կարող է դառնալ մարզի տնտեսության, մասնավորապես արդյունաբերության զարգացման համար: Հիշատակենք, որ 2003թ. ԱՄՆ-ի NERL ընկերության կողմից մշակվել է Հայաստանի հողմաէներգետիկ պաշարների քարտեզը, ըստ որի՝ հողմաէլեկտրակայանների հիմնական հեռանկարային տեղանքներից մեկն էլ Քարախաչի լեռնանցքն է: Իտալական մասնավոր ընկերության կողմից հիմնադրված «Առէներջի» ՍՊԸ-ն ավարտել է Շիրակի մարզի Քարախաչի լեռնանցքի հողմաէներգետիկ ծրագրի մոնիթորինգային աշխատանքները [19]:

Շիրակի մարզի 2017-2025թթ. սոցիալ-տնտեսական ռազմավարական ծրագրի զարգացման համար արդյունաբերության ոլորտում նախատեսվում է 17,1մլրդ. դրամի ներդրում կատարել [20]: Արդյունաբերությունում իրականացվող քաղաքականությունում հիմնականում նախատեսվում է իրականացնել ենթակառուցվածքների զարգացման, ՓՄՁ (փոքր և միջին ձեռնարկություն) գործարար, ուսուցողական, տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն, ֆինանսական և ներդրումային աջակցություն, սպանդանոցների և բրդի

վերամշակման ձեռնարկությունների կառուցման ծրագրեր, ինչն էական ազդեցություն չի ունենա զբաղվածության թվի և արդյունաբերության ներուժի շեշտակի աճի վրա: Հատկանշական է, որ մարզում նախկինում գործող խոշոր կազմակերպություններն աստիճանաբար իրենց տեղը զիջում են փոքրերին, որոնք չեն ապահովում արդյունաբերության արագընթաց զարգացումը:

Ի մի բերելով կարելի է արձանագրել, որ մինչ օրս մեր հանրապետությունում արդյունաբերության զարգացման խնդիրներով զբաղվող պատկան մարմիններին և գործարարներին, տնտեսագետներին չի հաջողվել կազմել և իրականացնել Շիրակի մարզի, հատկապես Գյումրու արդյունաբերության զարգացման իրատեսական ծրագրեր: Այդ առումով, առաջնահերթ պետք է մշակվեն և իրականացվեն ծրագրեր լքված արդյունաբերական շինությունները շահագործելու ուղղությամբ: Դրանք կարող են դառնալ գործարար կենտրոններ, պահեստներ և այլ նպատակներով օգտագործվող տարածքներ: Դրա լավագույն օրինակն է «Շիրակ մոլը», որը Ժամանցի լավագույն միջավայր է դարձել:

ПРОЦЕССЫ И ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ ПРОМЫШЛЕННОСТИ ШИРАКА (КОНЕЦ XX-НАЧАЛО XXI ВВ.)

Бояджян А. Г., Аветисян Г. Р.

Экономика независимой Армении, будучи частью экономической системы бывшего СССР в конце 20-ого века, претерпела радикальные структурные изменения. Наша республика не была готова к вызовам развития мировой экономики. Переход от социалистической экономической системы к капиталистической в условиях наличия мирового рынка в специализированном разделении труда в республике, в том числе Ширакского марза, привел к количественным и качественным сдвигам. В результате, Ширакский марз был специализирован на горнодобывающем и пищевом производстве и стал импортировать из других республик готовые промышленные товары, тогда как в советское время имелось собственное производство этих товаров. Особенно в отраслях материального производства экономики был допущен ряд стратегических ошибок, государство полностью сдало свои позиции в материальной и нематериальной системе хозяйствования, особенно в промышленной области.

Ключевые слова: социально-экономические проблемы, экономический район, промышленность, занятость, иммиграция, безработица, промышленный потенциал, машиностроение, легкая и пищевая промышленность.

PROCESSES AND ISSUES IN THE INDUSTRIAL DEVELOPMENT OF SHIRAK (END OF THE 20TH CENTURY TO BEGINNING OF THE 21ST)

Boyajyan A. G., Avetisyan G. R.

Having been a part of the collapsed Soviet economic system, the economy of the newly independent Republic of Armenia underwent a radical structural change at the end of the 20th century. Our republic was not ready for the challenges of global economic development. The transition from the socialist economic system to capitalist, global market conditions, led to a quantitative and qualitative shift in the professional division of labor in the republic, including the Shirak economic region. As a result, the Shirak economic region specialized in mining and agricultural production, and began importing from other states the very industrially-produced products that were produced in this economic region in large quantities during the Soviet years. A number of strategic mistakes were made in the economic, especially material production sectors: the state has completely lost its position in the system of material and non-material economy, especially in the field of industry.

Keywords: socio-economic problems, economic region, industry, employment, immigration, unemployment, industrial potential, mechanical engineering, light and food industries.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բոյաջյան Ա. Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական փոփոխությունները XX դ. և XXI դ. սկզբին: Հայոց նորագույն պետականության քառորդ դարը, գիտաժողովի զեկուցումների դրույթներ: Հունիսի 21-22, 2016: Երևան: ՀՀ «ԳԱԱ Հրատարակչություն»: 2016: Էջ 184-187:
2. Բոյաջյան Ա. Լենինականի բնակչության զբաղվածությունը 1970-1987 թթ. // ՇՀՀԿ Գիտական աշխատություններ: 2004: Հ. 7: Էջ 157-165:

3. Բոյաջյան Ա. ԴԱՆ, Լենինականի քաղաքային սովետի նախագահ Կ. Համբարձումյանի զեկուցագիրը ՀՀ նախարարների խորհրդի նախագահ Վ. Մանուկյանին, տետր 14, Գյումրի 2002թ.:
4. Բոյաջյան Ա. ԴԱՆ, Շիրակի թեթև արդյունաբերությունը, տետր 10, Գյումրի: 2017:
5. Բոյաջյան Ա. ԴԱՆ, Շիրակի թեթև արդյունաբերությունը, տետր 16, թ.4: Գյումրի: 2018:
6. Բոյաջյան Ա. ԴԱՆ, Շիրակի մեքենաշինությունը, տետր 13, թ.6: Գյումրի: 2017:
7. Բոյաջյան Ա. ԴԱՆ, Շիրակի սննդի արդյունաբերությունը, տետր 15, թ.2: Գյումրի 2017:
8. Բոյաջյան Ա. ԴԱՆ, Շիրակի մարզի էներգետիկան, տետր 17, թ.5: Գյումրի: 2018:
9. arm.stat.axet 2080 pdf
10. <https://www.armstat.am/file/doc/99509898.pdf>
11. <https://168.am/2017/08/12/832790.html>.
12. www.mnp.am
13. www.mtad.am/hy/qaramya/
14. www.armstat.am/file/doc/99458828.pdf,
www.armstat.am/file/doc/99494313.pdf,
15. www.armstat.am/file/article/prom_7.pdf
16. www.armstat.am/file/doc/99458828.pdf,www.armstat.am/file/doc/99494313.pdf,
www.armstat.am/file/doc/99509898.pdf,
www.armstat.am/file/doc/695.pdf.
17. www.ne.wsinfo.am
18. www.arm.stat.am20800.pdf.
19. <http://www.irtek.am/views/act.aspxaid=54846>
20. www.shirak.mtad.am/develobopman-plan/

Տեղեկություններ հեղինակների մասին

Բոյաջյան Ա. Գ. - պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Շիրակի պետական համալսարան

Էլ. փոստ a.boyajyan@mail.ru

Ավետիսյան Գ. Ռ. – աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Շիրակի պետական համալսարան

Էլ. փոստ gayane.avetisyan.5@mail.ru

Տրվել է խմբագրություն 06.09.2019